

ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովինարի գյուղապետարանը հայտարարում է մրցույթ գյուղապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետի (ծածկագիր 3-1-5) համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար:

16.09.2015

Տիպ՝ Համայնքային ծառայության թափուր պաշտոններ
Հայտատու՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովինարի գյուղապետարան
<<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդված

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովինարի գյուղապետարանը հայտարարում է մրցույթ՝ գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության հետևյալ թափուր պաշտոնի համար:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺՆԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ (ծածկագիր 3-1-5) :

Նշված պաշտոնի զբաղեցնելու համար պահանջվում է՝

ա) առնվազն միջնակարգ կրթություն

բ) ունի <<Համայնքային ծառայության մասին>>, <<Իրավական ակտերի մասին>>, <<Բյուջետային համակարգի մասին>>, <<Տեղական տուրքերի մասին>>, <<Գուրքահարկի մասին>>, <<Եկամտահարկի մասին>>,

<<Հաշվապահական հաշվառման մասին>> ՀՀ օրենքների, աշխատակազմի կանոնադրության և լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացությունն ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն:

գ) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվության:

դ) ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Պաշտոնի անձնագրով սահմանված հիմնական գործառույթները՝

Բաժնի առաջատար մասնագետը՝

ա) կատարում է ՏԻՄ-ում և նրան ենթակա կրթական, մշակութային և մյուս հաստատությունների ֆինանսատնտեսագիտական գործունեության ուսումնասիրություն և վերլուծություն,

բ) պատասխանատվություն է կրում ՏԻՄ-ի և նրան ենթակա կազմակերպությունների ֆինանսական վիճակի վերաբերյալ ներկայացվող հաշվետվությունների ժամանակին ընդլայնման, ստուգման, վերլուծման, ամփոփման և տարեկան ֆինանսական պլանների կազմման վերաբերյալ:

գ) կատարում է բաժնի պետի հանձնարարությունները՝ ժամանակին և պատշաճ որակով,

դ) ապահովում է աշխատակազմի փաստաթղթային շրջանառությունը և լրացնում համապատասխան փաստաթղթերը.

ե) հետևում է բաժնի պետի հանձնարարականների, համապատասխան ժամկետներում, կատարման ընթացքին, որոնց արդյունքների մասին զեկուցում է բաժնի պետին.

գ) իր լիազորությունների սահմաններում, անհրաժեշտության դեպքում, նախապատրաստում և քարտուղարին է ներկայացնում է իր աշխատանքային ծրագրերը, ինչպես նաև առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, գեկուցագրեր և այլ գրություններ,

ե) իրականացնում է քաղաքացիների հերթագրում՝ քարտուղարի մոտ ընդունելության համար,

ը) քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքներին.

թ) քարտուղարի հանձնարարությամբ ուսումնասիրում է դիմումներում և բողոքներում բարձրացված հարցերը և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում նախապատրաստում պատասխան.

թի) Պարբերաբար վերահսկողություն է իրականացնում համայնքի տարացքում գործող առևտրի և սպասարկման օբեկտներում առևտրի կանոնների պահպանման նկատմամբ, կատարված ուսումնասիրությունների վերաբերյալ գեկույց է աշխատակազմի քարտուղարին, եռամսյակը մեկ կազմում է հաշվետվություն.

ժ) իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ: Բաժնի առաջատար մասնագետն ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ

Մրցույթն կանցկացվի 16.10.2015թ. ժամը 14⁰⁰ -ին Ծովինարի գյուղապետարանում (գ. Ծովինար 3 թաղ հր. 33 շենք)

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է 01.10.2015թ. մինչև ժամը 17⁰⁰

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 10:00 -18:00 բացի շաբաթ և կիրակի օրերից:

Այլ տեղեկությունների համար դիմել Ծովինարի գյուղապետարան հեռ. 094260210 կամ ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչություն (ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7, հեռ. (0264 2-23-32)):

Դիմող ՀՀ

քաղաքացիները համայնքային ծառայության թափուր պաշտոնի մրցույթին մասնակցելու համար պետք է անձամբ Ծովինարի գյուղապետարան ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը,

1. դիմում(ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս)
- 2.կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթղթի պատճեն
- 3.արական սեռի անձինք ներայացնում են գին գրկույկի կամ կցագրման վկայականի պատճեն
- 4.աշխատանքային գրքույկի պատճեն (ունենալու դեպքում)
- 5.երկու լուսանկար 3 x 4 չափսի:
- 6.անձնագրի պատճեն

Հասցեն ՀՀ գեղարքունիքի մարզ գ. Ծովինար 3 թաղ հր. 33 շենք
Հեռ. 094.260. 210 . 0 262 6 00 19

Էլ. փոստ tsovinar.gegharquniq@.mta.gov.am

